Պաշտոնական լրահոս

Ուրբաթ, 9 Հոկտեմբեր 2009

Այսօր տեղի է ունեցել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր Սիմոնյանը։
Հանձնաժողովը քննարկել է 22 բարեգործական ծրագիր։ Մասնավորապես, քննարկվել եւ հաստատվել են՝
«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Տող գյուղի միջնակարգ դպրոցի աջակողմյան հատվածամասի եւ սպորտային մասնաշենքի հիմնանորոգման հեղինակային հսկողության,
- Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի միջնակարգ դպրոցի տարածքի եւ տանող ճանապարհի ասֆալտապատման,
- Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի միջնակարգ դպրոցում համակարգչային դասարանի հիմնման,
- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքի N 2 միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցման,
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» հասարակական կազմակերպության մարզամշակութային համալիրի դահլիճի հատակի տեղադրման,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցների կահավորման,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սպիտակաշեն գյուղի միջնակարգ դպրոցի կահավորման ծրագրերը,
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝
- Սեւանի Վազգենյան դպրանոցի ջեռուցման, կոյուղու եւ ջրամատակարարման համակարգի նորոգման,
- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հեռախոսաֆիկացման աշխատանքների,
- Միաբանական շենքի ջեռուցման համակարգի թերությունների վերացման աշխատանքների,
- Մայր Աթոռի տարածքում գտնվող նախկին հիվանդանոցի տարածքի բարեկարգման աշխատանքների,
- Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջի հուշակոթողի տեղադրման շինարարական աշխատանքների,
- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ավտոտնտեսության, պահեստների, մոմի արտադրության շենքի ջեռուցման, ջրամատակարարման եւ կոյուղու վերակառուցման աշխատանքների,
- «Արաբկիրի հայորդաց տան սաների ուսումնակրթական պայմանների բարելավման,
- Էրեբունու համայնքի եկեղեցու շինարարության համար ամրանների ձեռքբերման ծրագրերը,
Ամերիկայի «Հայ օգնության ֆոնդ» բարեգործական կազմակերպության «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2009-2010 թվականների սոցիալական ծրագիրը։
«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի «Տարոն - 3» թաղամասում համայնքային կենտրոնի կառուցման եւ Գյումրու «ԱՌԴԱ» մանկապարտեզի տանիքի, դահլիճի ու հարակից խմբասենյակի նորգման ծրագրերը,
«ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն սոցիալապես անապահով բնակչությանը» ծրագիրը,
Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաչյուղի կողմից Սպիտակում 2009-2012 թվականներին իրականացվող «Մտավոր եւ ֆիզիկական արատ ունեցող երեխաների խնամք եւ բուժում» ծրագիրը,
«Օթեւան» երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ գյուղի նախկին արդյունաբերական շենքի վերափոխում-վերակառուցում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների համար» ծրագիրը,
«Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության մարզերի 15 համայնքներում ջրագծերի վերակառուցման ծրագիրը։
Նիստում քննարկվել եւ հաստատվել են նաեւ նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ եւ տարբեր կազմակերպությունների հասցեներով ուղարկված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր։